Ըստ Ա. Ալպոյաճյանի, ի թիվս այլ հարևան գաղթօջախների, Սիվրի-Հի- սարի գաղթօջախի հիմնադրումը պետք է լինի 14-15-րդ դարերում. «... ձի դարուն վերջին քառորդէն մինչև ձե դարուն առաջին քառորդին վերջերը / 1387-1425 / քազմաթիվ պարսկահայեր՝ մասնավորաբար Ազուլացի, Յոնա - ցի, Երևանցի, Նախիջևանցի, Զուղայցի եկան և հաստատուեցան նախապես հայաբնակ Անկիւրիա, Մուրաղչայ, Քայապազար, Ազ Շահիր և շրջակայ բա- դաքները»: Պետք է ենթադրել, որ նախապես հայաբնակ արտահայտությունը հիմնված է պատմական փաստերի վրա, և դա վերաբերվում է նաև Սիվրի- Հիսարին, որի հայ գաղութի հիմնադրումը մենք ենթադրում ենք, որ պի- տի կապ ունենա Անիի անկմանը հետևած առաջին հայ գաղթականությունների հետ: իսկ 14-15-րդ դարերի գաղթականությունները արդեն հիմնադրված գաղութները համալրողներն են եղել: Սիվրի-Հիսարի գաղթօջախի և քար- քառի մասին առաջին տեղեկություն տվողը Սիմէոն Դպիր Լեհացին է (Ձ 07- 1618 թթ), ապա՝ Երկու հարյուր հիսուն տարի անց, նաթանյան Պողոս Վարդապետը⁴: Սիվրի-Հիսարիների քարքառի մասին նա գրում է. «... Թեպէտ իրենց մայրենի լեզունին չեն կորսնցուցած եւ միշտ հայերեն կը խօ- սին, բայց աղաւաղեալ է եւ շատ քտեր կան, որ խօսած ժամանակին չի հասկցուիր, ուստի արժան դասցի մեկ քանին հոս յիշելու, որք են՝ կէլէճէ լըսէ, Խօսէլ, առուակ լգեղեցիկ, խոցծի խուտ, սխալ, շեկ / երեք /, տօպինաձ իշանաձ, իփիս ինչպէս /, ասոնց նման քտեր շատ

1 Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, 2-րդ մաս, Երևան, 1951, էջ 437-8:
2 Ա. Ալպոյաճյան, Պատմութիւն Եվրոպիոյ հայոց, Գահիրե, 1952, էջ 1387:
3 Սիմէոն Դպիր Լեհացոյ Ուղեգրութիւն, տարեգրութիւն և յիշատակա- րանք, Վիեննա, 1936, էջ 333, նույնը Պատմագիրք Սիվրի-Հիսարի հա- յոց, էջ 37: Այսուհետև՝ ՊՄՀ:
4 Նաթանյան Պողոս Վարդապետ, Տեղեկագրութիւն Սիվրի-Հիսարու, Կ, Թօ- լիս, 1872, նույնը՝ ՊՄՀ, 94-105:

կան, նստելու տաննին լսողը կը կարծէ, թէ օտար լեզուաւ կը խօսին¹։
 Սիվրի-Հիսարի շատ յուրահատուկ բարբառի նկատմամբ հետաքրքրութիւնը չի դադարում. շուրջ 170 Սիվրի-Հիսարի բարբառի բառեր հրատարակուած է ս. փորձաւետյանը Քիւրակնում², իսկ Հ. Աճառյանը իր «Գաղտնական բառարանում», այդ բառերի Սիվրի հասցնում է 555-ի³։ Բարբառի մասին Հ. Աճառյանը ենթադրում է, որ պիտի «Կիլիկիոյ ենթաբարբառներից», լի- նի։ Սակայն սա շատ շտապ, առանց ձաստերի արված ենթադրութիւնն էր, որ ներքևում է հինց հնչյունական մեկ հատկանշական օրենքի ստուգմամբ։ Խոսքը տանք Հ. Աճառյանին. «Չայնական փոփոխութեանց մէջ ամենէն յատկանշականն ու կիլիկիոյ մէջ տարածուածը ա ձայնին օ-ի վերածումն է շեշտի տակ⁴»։ Տեսնենք համաձայն է Սիվրի-Հիսարը այս կետում «կիլիկ- յանների», հետ՝ համեմատութեան եզր ունենալով գրաբարը.

գրաբար	ձայն	Ջեյթուն	Մարաշ	Սիվրի-Հիսար
հաց	հօց	հօց	հօց	հաց
շատ	շոդ	շոդ	շոդ	շատ
երթալ	իշդու	իյթու	դրթու	էթալ

ինչպես տեսնում ենք, Սիվրի-Հիսարի բարբառը ինչպես բաղաձայններ- րի, այնպես էլ ձայնավորների հնչյունափոխութեամբ համաձայն չէ կի- ւիկյանների հետ։ Հետևաբար այն կիլիկյան բարբառ չի կարող համարվել։
 Իսկ որքանով կարելի է հիմնավորված համարել նրա մեծի կամ Երթակի բարբառներից մեկը լինելու մտկածը։ Դանի որ մեծի տարածքի քննակալա- յանում հայեր չեն մտնել, մենք միայն համեմատել կարող ենք այն նը- ման մեկ այլ բարբառի հետ, որը նույնպես համակնուցում է մեծից ձագերուն։ Դա նոր նախնական բարբառն է։ Փորձենք բաղաձայն միայն այս երկու բարբառներին հատուկ զուգարանութիւնները կամ ընդհանրութիւնները՝

- ա/ նրկու բարբառներում էլ նվազագույնի են հասցված հոգնակները.
 նոր նախնականում -էը, -նէր, Սիվրի-Հիսարում՝ միայն -էը :
 բ/ ն ունեցող լան, ն/ րայեռո ներկայում ենթարկվում են -ի/լ/ կրա- վորակերպ նոնարման լանիմ, կոտնիմ, տանիմ և այլն/), իսկ ըզմական, աղամանական աղանիում ուլ կլաոմում, կրամում, կրկրնում և այլն/ :
 գ/ ձեռական նոնարման ձամանակ երկու բարբառներումն էլ ներկան կա- ռող է կազմել անորոշ ուրբայի օգնութեամբ, օրինակ՝
 նոր նախնական՝ մէզի չի բալ լմեզ մոտ չի գալիս/
 Սիվրի-Հիսար՝ մէզի չուբալ լմեզ մոտ չի գալիս/
 դ/ Բառաբարում առկա են ցուցական դերանուններով նույնատիպ բազ- մաթիվ ընդհանրութիւններ՝
 նոր նախնական՝ վուտէի, տնատար, առնատար
 Սիվրի-Հիսար՝ վուտօի, տնատար, առնատար և այլն։

1 Տես նախնական... կամ 702, էջ 103:
 2 Տես Քիւրակն, 1898, էջ 322-323, 1899, էջ 273, 427, 798:
 3 Տես Հ. Աճառյան, Գաղտնական բառարան, Քիլիկիա, 1913:
 4 Հ. Աճառյան, Հայ բարբառագիտութիւն, էջ 200:

- ա/ մակառար դերբայով կազմված կրկնավոր բարդութիւններ՝
 նոր նախնական՝ խունտում-ցունծում/
 Սիվրի-Հիսար՝ խունտում-ցունծում/
 բ/ չվու բարբառներին էլ հատուկ է երկաստիճան պայթականների ձայնե- դազուրկ համակարգ:
 յ/ Սի շարք հնչյունական անցումներ, որոնք հատուկ են այս բարբառ- ներին, օրինակ՝
 ը-շ, ը-ժ
 նոր նախնական՝ էրեը-ժէը, հարսանիը-հաշնիը
 Սիվրի-Հիսար՝ երեը-շէը, հարսանիը-հաշնիը, հաշնապալ, հաշնաբուլ
 Կը եղանակի շնչեղ-իւացում կ-ը/ ձայնեղներին և շփականներին նախորդելիս՝
 նոր նախնական՝ կու գաս-քուբաս, կու ասէ-քրսէ
 Սիվրի-Հիսար՝ կու գաս-քուբաս, կու ասէ-քրսէ և այլն։

Այս ընդհանրութիւնները թեև ինչ որ քան ասում են նրանց երբեմնի մոտիկութեան, բայց ոչ նույնութեան մասին, ուստի չի կարելի նույն- նացնել նոր նախնականի բարբառը Սիվրի-Հիսարի հետ։

Նման յուրօրինակ բարբառ, ինչպիսին Սիվրի-Հիսարն է եղել, չէր կա- ռող դուրս մնալ մեծ բարբառագետի և լեզվաբանի տեսադաշտից. ուստի գարմանալի չէ, որ Հ. Աճառյանը բազմիցս անդրադարձել է իր ուսումնաս- սիրութիւններում նրա բառապաշարին, ածականների նախամասնիկավոր գե- ռադրական կազմելու եղանակին, գոյականների հոգնակու կազմութեանը և դերանունների հոլովման ու ձագման հարցերին⁵։

Սակայն հրապարակի վրա եղած նյութերի սղութեան և մեծ մասամբ ոչ գիտական կամ ոչ հավաստի/ լինելու պատճառով նա հնարավորութիւն չի ունեցել միշտ և վերջնական եզրակացութիւններ կատարելու Սիվ- րի-Հիսարի բարբառի օրինաչափութիւնների վերաբերյալ։

Սիվրի-Հիսարի բարբառի օրինաչափութիւնների մասին խոսելիս պիտի նշել նրա պայթական ձայնեղների քիչ խլացված արտասանութեան փաստը, որը հայ բարբառագիտութեան մինչև վերջ չուսումնասիրված երևույթնե- րից մեկն է և կարող է հնչույթաբանական լուրջ վերլուծութիւնների։

Հայերենի նաև այլ բարբառներում նկատվող այս երևույթի վրա ուշա- դրութիւն են դարձրել մեզ մոտ 60-ական թվականներից սկսած։ Է. Աղա- յանը այս մասին գրում է. «Ցավոք մեր բարբառների հնչույթային համա- կարգը դեռևս ուսումնասիրված չէ, և ներկայացրած եռանդամ հակադրու- րութիւնը ձայնեղազուրկ բարբառների համար անվիճելի է միայն մի քանի- սի տվյալներով, իսկ մյուսները կարող են դեռևս հնչույթաբանական մըշ- գրութեան վերլուծութիւններին... Նայերենի ձայնեղ պայթականներն առհա- սարակ շատ ավելի թույլ պայթյունով են արտասանվում, քան խուլները»⁶։

1 Հ. Աճառյան, Իրականութեան բերականութիւնը հայոց լեզվի, 1 հ. էջ 114, 20, 457, 3 հ. էջ 775, 817:
 2 Է. Աղայան, Գրաբարի բերականութիւն, հ. 1, գիրք Ա, Երևան, 1964, էջ 150-152:

Հայերենի նման՝ ձայնեղները թույլ պայթյունով արտասանվող, բարբառների դասական օրինակ կարող է ծառայել Սիվրի-Հիսարի բարբառը, որի ոչ միայն բառակազմի ձայնեղներն են խլանում, այլև բառամիջի, բառավերջի և նույնիսկ փոխառյալ բառերի վրա է տարածվում այս երևույթը:

Ձայնեղների իլացման պատճառով պայթականների եռանդամ խոնարհը / հակադրությունը չի վերանում և նմանադուր ղարձած բառերը միմյանց հետ չեն շփոթվում, օրինակ՝ տուլն բառի հետ չի շփոթվում երկրորդ դեմքի եզակի դուլ դերանունը, որ բարբառում արտասանվում է տուլն /վո՛ւ-տուխ էյիր տուլն, տուլն-տեղ չունիխ/, ձէր-ը պատավ, ձէր-ի /ձեր/, երկրորդ դեմքի հոգն. դերանուն / հետ / ձէր մայրտ ձէր տունէն մէր տունու չուրալ /, կիր-ը պարած բար, կիր-ի բիր, հետ և այլն:

Այս երևույթի ավելի հստակ ձևակերպումը թերևս ակադ. Գ. Ջահուկյանին է. «տուլ բաղաձայնների ձայնեղության և ձայնեղների խլությունների դեպքերը համալս գուգորդվում են նրանց թույլ և ուժեղ արտասանության հետ, ընդ որում կան դեպքեր, երբ հիմնական տարբերակիչ հատկանիշը դառնում է ուժեղության ու թուլության հակադրությունը, իսկ ձայնեղության հակադրությունը դառնում է երկրորդական: Այս բանը կարող է տարածվել սկզբնային դիրքերի վրա... հայտնի է, օրինակ, որ նախկին խուլերից ծագող ձայնեղները ավելի ուժեղ են, նախկին ձայնեղներից ծագող խուլերը՝ ավելի թուլ»:

Այս երևույթի մասին մենք գրել ենք շուրջ 30 տարի առաջ Բողազլյանի /Գամիրքի/ բարբառի կապակցությամբ, սակայն օրենքի ձևակերպումը թալիս ենք միայն այժմ: Այսպես՝ բառակազմի ձայնեղների իլացմանը հետևում է ձայնավորների փոփոխությունը /քմայնացում, շրթնայնացում /, որը «Մծառյանի օրենք», է կոչվում, սակայն մի խումբ բարբառներում բառակազմի ձայնեղ պայթականների իլացմանը՝ չի հետևում ձայնավորների փոփոխությունը, որը արդյունք է նախկին ձայնեղներից ծագող խուլերի որակի բուն խուլերի հետ չհավասարվելուն, այսինքն տեղի է ունենում ուժեղության և թուլության հակադրություն և ոչ թե՛ ձայնեղության և խլության. ի լրացումս «Մծառյանի օրենքի», մենք այն անվանում ենք «Մկրտչյանի օրենք»:

Այնուամենայնիվ, քանի որ նման՝ բառակազմի թույլ արտասանությամբ ձայնեղների տառադարձության համար հայ բարբառագիտությունը չունի հատուկ նշաններ, մենք ստիպված ենք Սիվրի-Հիսարի բարբառի պայթականների համակարգը համարել երկաստիճան ձայնեղագուրկ: իսկ արդյոք Սիվրի-Հիսարի բարբառը ինքնուրույն պիտի համարել, թե՛ ենթաբարբառ: Ինչպես

1 Գ. Ջահուկյան, ներածություն հայ բարբառագիտության, Երևան, 1972, էջ 48-49:
2 Տես Պատմագիրք Եօզկաթի և շրջակայից /Գամիրք/ հայոց, Պեյրուլթ, 1988-89, էջ 212:

Հ. Ածառյանն էր ընդգծում. «Բարբառի էությունը կազմող տարրերն են ձայնաբանությունն ու քերականությունը»¹: Հնչյունաբանության մասին մենք արդեն նոսեցինք, այժմ անդրադառնանք նաև նրա ձևաբանությանը: ձևաբանությամբ նույնպես Սիվրի-Հիսարի բարբառը առանձնանում է մյուս հայերենի բարբառներից իր երեք տևական ներկա կամ սովորական ներկա կազմող մասնիկներով /բայերով/: դրանք են՝ կար, կենամ, էրէր:

Այն ինքնուրույն է նաև իր ապառնի կազմելու եղանակով: Հայտնի է, կը հմբակցության բարբառների ապառնին կազմվում է պիտի կի, տի ուղղական եղանակիչի օգնությամբ, մինչդեռ Սիվրի-Հիսարի բարբառը, ապատար դերբայի -էլուլ, -ալուլ վերջավորության ուլ ձայնավորը դեն անցնով, երկրորդ լ-ն է հավելում -էլ, -ալ-ին և այս կերպ է կազմում ապառնին՝ վագէլլ էմ, առնէլլ էմ, տանէլլ էմ, կորէլլ էմ և այլն, որ նշանակում է վագելու եմ, առնելու եմ, տանելու եմ, գրելու եմ:

Տարբերվում է Սիվրի-Հիսարի բարբառի արգելական հրամայականի կազմությունը ևս կը հմբակցության մյուս բարբառներից, որոնց արգելականը կազմվում է մի, մը մասնիկների և անցյալ դերբայի /վաղակատարի/ ձևերով՝ մը բըրէր, մէնէր, մառնէր և այլն, իսկ Սիվրի-Հիսարինը՝ լինում է մէթալ «մի գնա», մը բըրշէլ «մի եսիր», մառնէլ «մի առնիր» և այլն:

Ընդհանուր հայերենը ձգտում է հոգնակերտների միօրինականացման. արդի հայերենում ունենք եր-ը միական, -ներ-ը բազմական, ք-ն հավաքականների համար, իսկ Սիվրի-Հիսարը ավարտել է այս ընաշրջությունը և պահում է միայն մեկ հոգնակերտ՝ էր-ը և միական, և բազմական բառերի համար՝ հավ-հավէր, տուն-տունէր, կաթմայ-կաթմայէր, ճամպակ-ճամպակէր, բաղբըցի-բաղբըցիլէր և այլն:

Հոլովիչների թիվը նույնպես հասցված է նվազագույնի՝ եզակի թվում գոյականները ենթարկվում են ի, իսկ հոգնակի թվում՝ ուլ հոլովման՝ տարիլէրուլ, ժուրէրուլ, տունէրուլ, ախալէրուլ և տարիլիլ, ժուրիլ, տունիլ ախալիլ և այլն:

Ինչպես արդեն նշվել է, /էջ 113-114 / ժեստական եռնարման ժամանակ ներկա է կազմվում անորոշ դերբայից առաջ կցելով չիլ, չըլ, չուլ ժեստական մասնիկները՝ Ախայէթը մէզի չուրալ /եղիսաբեթը մեզ մոտ չի գալիս /; Խաթմայէրըս չըիօսիլ, չուտէլլ, պան ա չէնէլ /Մեր սկեսուրը չի խոսում, չի ուտում, բան էլ չի անում / և այլն:

Վաղակատարը դրսևորվում է հարակատարի միջոցով և կարող է առանց օժանդակ բայի գործածվել երրորդ դեմքի եզակի թվի վաղակատարի փոխարեն՝ Ախաբէթէնց Տիրօհին ուռուբան փոխած /եղիսաբեթէնց Տիրուհին շրջաբազասոր փոխել է/, Պակցայն ա հասկըցած, էտէվէն դորացած, կանչած, ամթանը տուրած դալա փարան ալ յէտ տուրած / խանութպանէլ հասկացել է, Զ. Ածառյան, Հայոց լեզվի պատմություն, Գ. 2, էջ 125:

ևսևից գոռացել է ետ կանչել, ամոթանք է տվել և կեղծ փողն էլ վերադարձրել է/:

Բառապաշարի տեսանկյունից ևս Սիվրի-Հիսարի բարբառը դրսևորում է զարմանալի ինքնուրույն՝ միայն իրեն րնորոշ բառերի կազմության մեկը, որոնք իրենց զուգածկերը մյուս ք-բառաներում կամ զրաբարում/ չունեն և կամ այդ արմատները, բառերը մեզ են հայտնի դառնում միայն շնորհիվ Սիվրի-Հիսարի բարբառի. նշանք դրանցից մի քանիսը տօպինած, նշանած, տօպինք, նշանդեք, խաթմայ, սկեսուր, խօծծի, սհալ, սուտ, կրծծէլ, սկսել, ըխտամասիկ, ուկտատեղի և այլն: Ինչպես մատաղի միս, բաժին, ատտէն, այս աշխարհը, և այլն: Ինչպիսի մանրամասն՝ Բառագիտությունը բաժնում /: Ահա այն ոչ լրիվ միայն Սիվրի-Հիսարի բարբառին հատուկ, մյուս բարբառներում քաղցրակալող հատկանիշները, որոնցով այն ներկայանում է հայերենի արքայալուրորինակ բարբառներից մեկը:

11. Հնչյունափոխություններ

Հնչյունափոխություն: Բարբառն ունի 39 հնչյուն, որից 8-ը ձայնավոր՝ ա, է, ի, ու, ը, օ, հ, լ, ջ, իսկ մնացածը՝ 31-ը՝ քաղաձայններ:

Ինչպես արդեն նշվել է, բարբառը ասես պահպանում է պայթական բաղաձայնների եռաշարք հակադրությունը՝ որոշ վերապահություններով. ձայնեղ պայթականները արտասանվում են ամենուր խուլերին մոտիկ արտասանությամբ, ուստի տառադարձության ժամանակ նրանք ևս արտահայտվում են սովորական խուլերով՝ նման հնչյունների տառադարձության համար նշանների քաղաքայնության պատճառով: Ի տարբերություն զրաբարի և արդի հայերենի, Սիվրի-Հիսարի բարբառն ունի նաև փափուկ լ, որը հանդիպում է շատ սահմանափակ թվով բառերում, օր.՝ լճոգ, պարլճիկ, աշկալճիկ և այլն: Քմայնացած կ, զ, ը հնչյունները հանդիպում են օտար փոխառություններում:

Հնչյունափոխություն: Չայնավորներ: Հին հայերենի ա-ի դիմաց հիմնականում բարբառն ունի ա բոլոր դիրքերում՝ աղ-աղ, աջ-աջ, ափ-ափ, մաղ-մաղ, ծափ-ծափ, թարան-թարան, ծարալ-ծարալ, դանակ-տանակ և այլն: Նախաշեշտ ա-ն քաղաքական և եռափունկ բառերում դառնում է ը՝ կարկառել, կարկրել, ապսպարել, ապրպարել, լասպրել, ամաշել, ամրջնալ, աղանծել, աղընծել, երկայնանալ, էրկըննալ և այլն: Ենչտանտեղող դիրքում կարող է նաև սղվել՝ թաթանել, թաթիել, չորանալ, չօրանալ, թքանել, թուրնալ, ժամանել, ժրմնել, ծնվել, և այլն:

Բառասկզբի ձայնեղ պայթականների իլացումից հետո նրանց հաջորդող ա-ն մնում է անփոփոխ, այսինքն չի ենթարկվում լ մտոյանի օրենքին, ՝ բամբակ-պանպակ, բան-պան, բանջար-պանջար, բարակ-պարակ, գորուն-կարուն, գառն-կառ, դարման-տարման և այլն:

Հին հայերենի ը-ի դիմաց ունի միայն օ բոլոր դեպքերում՝ ործ-օրց, որը-օրիշ, որդ-օրթ, ոհշար-օխճար, ոսկի-օսկիշ, փոր-փօր, լակոս-լակօս, խաղող-խալօղ, խնձոր-խրնձօր, սողց-սրղօց և այլն:

Հին հայերենի բառասկզբի ձայնեղների իլացմանը հաջորդող ը-ն չի ենթարկվում լ մտոյանի օրենքին, ՝ բողկ-պօկ, գոգնոց-կօցնօց, գործ-կօրծ, դող-տօղ, ըրբ-մօրբ, լօրբ, ձոր-ձօր և այլն:

Հին հայերենի ու-ին նույնպես համապատասխանում է ու-ն բոլոր դիրքերում՝ տուն-տուն, թուշ-թուշ, հունկ-հունկ, ծունկ-ծունկ, սուգ-սուր, կատու-կատու, բերուկ-բէրուկ, թուղուն-թուղուն և այլն:

Հին հայերենի բառասկզբին իլացած ձայնեղներից հետո գտնվող ու-ն նույնպես փոփոխության չի ենթարկվում՝ բուրդ-պուրթ, գունդ-կունտ, դու-տուն, ձուկն-ձուկ, ըուր-մուր, գուր-կուր և այլն:

Հին հայերենի ի-ին բառասկզբում մերթ համապատասխանում է է-ն՝ եկն-էկօ, ես-էս, երդ-էրթ, հարդ, մերթ, լէ-ն, եզն-լէզ, եռ-լէռ, երբ-լէթ, երգ-լէրք, երակ-լէրակ և այլն: Բառամիջում հիմնականում ունենք ե-է համապատասխանությունը՝ եփել-էփէլ, թեփ-թէփ, վեց-վէց, ասեղ-ասէղ, կապերտ-կարպէտ, մեռանել-մէռնէլ և այլն:

ի-ի մասնավոր հնչյունափոխության դեպքերն են՝ եղբայր-ախպայ, երեք-րէք, լէք, րէք, երկալ-որէվալ, երեխայ-րէխայ :

Հին հայերենի ի-ին համապատասխանում է ի բոլոր դիրքերում՝ թի-թի, ծիծ-ծիծ, հինգ-հինկ, քեռի-քէռի, խնամի-խրնամի, եկեղեցի-էկրղէցի և այլն: Անկամն երկու դեպք ունենք բառավերջում՝ քարի լոջ-պարլիջ, քարի-լիշատակ-պարիշատակ :

Հին հայերենի լսվող բայց գրությունում չարտահայտվող ը-ն Սիվրի-Հիսարի բարբառում ևս անփոփոխ է մնում՝ խնամի-խրնամի, քրտնել-քրտնէլ, քոնել-պրոնէլ և այլն: Ատ, սպ, սկ կապակցություններից առաջ բառասկզբում լսվող ը-ն նույնպես պահպանվում է՝ սպանանել-ըսպաննէլ, սկանանել-ըսկրսնէլ, սպանաղ-ըսպանախ, ստանալ-ըստանալ և այլն:

Գողտնավանկ ը-ն ենթարկվում է ու-ի ներդաշնակության՝ լիծայնություն պատճառով՝ թուլ-թուլու, կծու-կուծու, կծուծ-կուծուծ, կնունք-կունունք, կտուր-կուտուր, պտուղ-պուտուղ, խնդում-ցնծում-խունտում-ցունծում, տեուր-տուեուր և այլն: Որոշյալ հողի ը-ն նույնպես ներդաշնակվում է արմատական ու-ի հետ՝ տունը-տունու, շունը-շունու, ծուկը-ծուկու, մուկն-մուկու և այլն: Ձգոլշ-ուսկուշ բառի սկզբում լսվող ը-ն նույնպես ենթարկվել է ներդաշնակության այս օրենքին:

Երկրաբառներ: ԱՅ, ԱԻ, ԱՅ, ԵԱ, ԵԼ/ԻԻ: Հին հայերենի շեշտի տակ գտնվող այ-ը բարբառում դառնում է ա, իսկ շեշտանախորդ դիր-ըում պահպանվում է՝ այդ-ատ, այս-աս, այլ-ալ/ա, ձայն-ձան, ձայն-ան; այրել-այրել, կայծակ-կայծակ, բայլել-կայլել; Պահպանվում է նաև ձայնորդներից առաջ՝ նույնիսկ եթե նրանք անկում են՝ մայլը-մայլ, հայր-հայ, վայր-վայ, ծայր-ծայ, երեսն ի վայր-էրէսկուվայ, այր-մարդ-այմարթ և այլն: Բառակազմում այ-է հնչյունափոխություն ունենք այգեկիթ-էքլիթ, այգ-ողբ-էքոբ, այգի-էքի բառերում:

Ա: Հին հայերենի ալ երկրաբառի դիմաց ունենք օ, ինչպես ընդհանուր հայերենում է՝ աձծել-օծել, աւտար-օտար, աղաթը-աղօսկ, աւհրնել-օրհնել, տաւն-տօն, ծանաւթ-ծանօթ և այլն: Ոչ երկրաբառային դիրքում ալ-ը մնում է ավ՝ ծարաւ-ծարավ, պատաւ-պառավ և այլն:

Ոյ: Բոլոր դիրքերում հին հայերենի ոյ-ի դիմաց ունենք ու՝ քոյը-քույ, անոյշ-անուշ, քնկոյգ-ունկուց, ոյժ-ուժ, գրոյց-գուրուց, ոյր-ուր, պտոյտ-պուտուտ, նմոյշ-նումուշ, երկոյն-իրկուն բառերում: թոյլ-թիլ բառում ունենք ոյ-ի անցումը, իսկ գոյն-կույին, քոյր-քույ, լոյս-հույս բառերում՝ ոյ-ույ:

ԵԱ: Հին հայերենի եա-ին շեշտի տակ համապատասխանում է է-ն՝ դա-եակ-տայէկ, կորեակ-կօրէկ, սեաւ-սէվ, բարեաւ-գարէվ, մամիկոնեանք-մամիկոնէնք, գրեաց-կօրէց, գրեալ-կօրէլ և այլն: Հրեալ-~~քա~~ բառում ունենք մասնավոր -եալ-լա անցումը:

ԵԼ/ԻԻ: Շեշտի տակ հին հայերենի ել/իլ-ի դիմաց ունենք ու հետևյալ բառերում՝ ալիւր/ալիւր-այլուր, աղբիւր/աղբուր-սխալւլ/ախպուր, արիւն-այրուն, հարիւր/հարուր-հայրու, առիւծ/առուծ-այրուծ, մրջիւն-մուրջուն, ձիւթ-ձութ, միւղ-մուղ: Երկու բառերում ունենք իւ-ուլի անցումը՝ ձիւն-ձուլին, սիւն-սուլին, որը թերևս բացատրվում է այդ բառերի երկվանկ դառնալու իրողությունամբ, երբ շեշտը տեղափոխվել է երկրաբառի վրայից:

-ՈԹԹԻԼՆ վերջածանցում ունենք իւ-ի հնչյունափոխություն՝ թշնամուլիւն-թշնամուլիւն, նեղուլիւն-նէղուլիւն, չարուլիւն-չարուլիւն, չորուլիւն-չօրուլիւն և այլն:

Բառավերջի ել-ը լինում է էվ՝ Թեթել-թէթէվ, դեւ-տէվ, տերել-տէրէվ, արեւ-արէվ, մինչեւ-մինչէվ, ձեւ-ձէվ և այլն: Անձրել-անձվէր բառը դրափոխության պատճառով այդ օրենքից դուրս է մնացել:

Բառավերջում շեշտի տակ հին հայերենի իւ-ին համապատասխանում է իվ-ը՝ հաշիւ-հաշիվ, արծիւ-արծիվ, պատիւ-պատիւ, կոիւ-կրոիվ և այլն:

Շեշտանախորդ դիրքում ունենք նաև իւ-ի անցում ինքն իւր-ինզիր, կիւրակէ-կիրակի, բառերում: Ջէմպիլ բառը ոչ թե այս անցմամբ է առաջացել, այլ հավանաբար փոխառություն է Թուրքերենի zembil ձևից:

Ե.Պ. ածականներ: Չայնեղ պայթականներ: Բ, Գ, Դ: Բառակազմի ձայնեղ պայթականները իւլանում են՝ վեր ածվելով համապատասխանաբար պ, կ, տ հնչյունների՝ բերան-պիյէն, բարեկամ-պարրկամ, բակ-պակ, բորիկ-պօյպիկ, բարձ-պարց և այլն: Գլուխ-կրլօս, զոզնոց-կօքնօց, գրող-կրրօղ, գինի-կինի, գրկել-կրրկէլ և այլն: Դառնալ-տառնալ, դղում-տուլում, դմակ-տրմակ, դեղնուց-տէղինուց, դնել-տրնէլ և այլն:

Չայնեղների թույլ արտասանության այս երևույթը ոչ միայն բառակազմի է, այլև բառամիջում է հանդիպում և տարածվում է անգամ փոխառյալ բառերի վրա: Չայնեղների շնչեղ-խուլների փոխարկվելը լը-իւ, ք-ք, դ-թ/ բառակազմի արդյունք է գրական-կրոնական փոխառությունների, իսկ բառամիջում՝ ետձայնավորային և ետձայնորդային դիրքերում գտնվելու ըրիւլ-իրիւլէլ, բնուլիւն-իրնուլիւն, քնավորութուն, քորքոսնել-փօրփոսնէլ, քրղել-փրղէլ, բուսանել-փրսնալ, խարել-խաիէլ, որք-օրփ, գերեզման-բէգէրման, գիրք-քիրք, գաւազան-բալագան, գանձանակ-բանգանակ, գիշեր-քիշէր: դեկտեմբեր-թէկտեմբէր, դեղ-թէղ, դեղել-թէղէլ, թուլ-նավորել, ղպրոց-թրոպօս, դաստու-թաստու, դատել-թատէլ և այլն:

Չայնեղ կիսաշփականներ: Զ, Զ: Այս ձայնեղ կիսաշփականները նույնպես վեր են ածվում իւլ ծ և ժ հնչյունների բառակազմի շնչեղ-խուլ ց և չ- հնչյունների ետձայնավորային դիրքերում և թ ձայնորդից հետո՝ ձի-ձի, ձիւն-ձուլին, ձագ-ձաք, ձայն-ձայն, ձեռք-ձէք և այլն: Ջուր-ժուր, ջոկ-ժօկ, ոթիլ-օշիլ, ալ-ալ, վերջ-վէրջ, արջ-արչ, որձ-օրց, բարձ-պարց և այլն: Բառակազմի մի շարք բառերում ծ, չ կիսաշփականները կարող են շնչեղ-խուլների վեր ածվել, որը գրական-կրոնական փոխառությունների ազդեցությամբ է տեղի ունենում՝ ջրհորդան-չօրթէն, ջորի-չօրի, ջրաղաց-չաղարչ, ջրուղ-չրփրթ, ջուլհակ-չուլակ, և այլն:

Խուլ կիսաշփականներ: Ծ, Ծ: Անփոփոխ բաղաձայններից են բոլոր դիրքերում ծուլ-ծօլ, ծամել-ծամէլ, ծնալ-ծրնօղ, ածել-ածէլ, գրուած-կըրված և այլն: Բառավերջի ծք կապակցությունը վեր է ածվում սկ-ի՝ թիւածք-թիւածակ, կարուածք-կարվածակ, բանուածք-բանվածակ և այլն: ժար-ժար, մուտ-մուտ, մերմակ-մէրմակ, կոծ-կօծ, կարծ-կարծ, և այլն:

Խուլ պայթականներ: Գ, Կ, Տ: Անփոփոխ են մնում խուլ պայթականները բոլոր դիրքերում՝ պաղ-պաղ, պակաս-պակաս, պահր-պար, պարպ-պարպ, պպ-պպ, շպիկ-շպիկ, կպ-կպ և այլն: Երթնայինների փոխարինում պ-մ անցում, ունենք դիպնել-տրմալ, պոկուիլ-մօկվէլ բառերում: Մասնավոր հնչյունափոխություններից է բառակազմի պ-փ անցումը պսակ-փրսակ պսակել-փրսակէլ բառերում:

Կալ-կալ, կար-կար, կարաս-կարաս, պակաս-պակաս, ձակ-ձակ, տակ-տակ և այլն: Մասնավոր հնչյունափոխության դեպքերից է կթոց-քրթօց բառում կ-ք անցումը: Կ-ի անկում ունենք կշեղ-շէրի, կշեղել-շէրիլ բառերում:

Մի կոււմբ բառերի սկզբում խուլ պայթական կ-ն փոխարինվում է խուլ շփական դ-ով, որը հավանաբար այլ բարբառախոսների ազդեցութեան արդոււնք պիտի համարել՝ կողպեք-դուլպակ, կոտորել-դօտուրէլ, կծեպ-դէպէ՛, /խէճէպ-ի առկայութեամբ/, կոււմ-դոււմ, կարմիր-դարմուր։ /կայ-մուր-ի առկայութեամբ/, կարծ-դարձ, կոհե-դրոհիւ, կոուուտեւ-դորվրտիւ, կոնակ-դորնակ, կտրատել-դրտրտէլ, կարծանալ-դարձրնալ : նույն անցումը բառամիջում տեսնում ենք միայն մեկ դեպքում՝ ակոյա-աողա բառում:

Կ-ն անցումն ունենք բառավերջին աղբիկ-ակշին բառում և կ-տ անցումը երկինք+ գետին- էրտինք-կէտինք բառում:

Ակելի կայուն է տ-ն բոլոր դիրքերում՝ տուն-տուն, տակ-տակ, տարզեղ-տահեղ, կատու-կատու, պատ-պատ, մակատ-մակատ և այլն: Տք կապակցութեամբ լինում է կկ՝ ոտք-օկկ, միտք-միկկ, լետք-լէկկ, գատք-գակկ և այլն: Ակտ-ախթ բառում ոչ թե տ-թ անցում է կատարվել, այլ ախթ-ը փոխառութեամբ պետք է լինի թուրքերենի բառից: Տ-ի անկում ունենք կրա-լապաշտ-կրակապաշ և կոպաշտ-կրոպաշ բառերում:

Ընչեղ-խուլ բաղաձայններ: Փ, Զ, Թ: Կայուն են բոլոր դիրքերում՝ փակ-փակ, փափուկ-փափուկ, Թափել-թափէլ, շափ-շափ, բարակուի-քարկօփ և այլն: Մասնավոր հնչյունափոխութեան դեպքերից են՝ փ-պ անցումը փխրու-պլ-պրլուրվէլ /նաև ակոպարլիչ, յատամաքչփորիչ, բառում/ :

Քար-քար, քիթ-քիթ, շարար-շարար, տար-տար, համարանք-հարմանք և այլն: Մասնավոր հնչյունափոխութեան դեպքեր են՝ ք-խ անցումը կշեք-շէրի, շարար-նրշարի, ականթթորք-ակամտօրի, աշարիք-աշարի, ոտք-վօրկ ստորոտ, տակ, բառերում և Թք-սկ աղօթք-աղօսկ, քք-սկ անցումը ուււք ածանցով վերջավորվող բառերում՝ քքուււք-պասկասկ, փորուււք-փորվասկ, Թիւււք-թիււսկ և նման այլ բառերում:

Թան-թան, Թեթեւ-թէթէվ, Թաթախել-թախտէլ, քթեթ-քթթէթ, Թուլ-թուլ և այլն: Մասնավոր դեպք է Թ-տ անցումը Թրթել-տրրէլ, Թ-տ անցումը աղօթք-ղօսկ բառերում:

Ընչեղ-խուլ պայթականներ: Զ, Ծ: Կայուն բաղաձայններից են բոլոր դիրքերում՝ շար-շար, շոր-շօր, շամիչ-շամիչ, խալ-խալ, պոչ-պօչ և այլն: Մասնավոր հնչյունափոխութեան դեպքերից են ն ձայնորդից հետո՝ շ անցումը հնչալեւ-իփիս-իշպէս, մանալեւ-մաշնալ բառերում: Ժամկոչ-ժանկօց բառում ունենք բարդութեան վերջին եզրի իմաստի մթազնում կոչել «կաշել», առի փոխարեն գոգ-կօգօղ /եկեղեցի փակող/, և ոչ, եկեղեցի կանչող /գիտակցում-Յանել-գանէլ, ցախ-ցախ, հագ-հագ, կազին-կազին, լագուցանել-լաձուէլ, մեծագուցանել-մէծուէլ, հատուցանել-հածուէլ /, վերջապէլ/ բառերում ունենք ց-ծ անցում /նաև լսեցուցանել-լսածուէլ բառում, և այլն/ է առաջին ց-ն/:

Ձայնորդներ: Ը, Թ, Մ, Ն, Թ, Լ: Համեմատաբար թիչ է փոխվում Ը ձայնորդը: Անկում է կիսամայն յ-ին հարթղելիս՝ մայր-մայ, վայր-վայ, ծայր-ծայ, եղբայր-ախայ, ինչպես նաև բառամիջում՝ ջրարաց-ծաղակ, կուրծք-կուսկ, բարշել-բաշէլ, վարձք-վասկ, /վարակ/, ջրհոր-ղան-չօրթէն, ջրհոր-ժրեփօր, օրհնել-օհնէլ, մանապարհ-մամպան, կտրատել-կրտրտէլ և այլն: Մասնավոր դեպք է արձակել-արձրկէլ բառում ր-տ անցումը: Թ-ն չի հնչյունափոխվում, անկման դեպք է ձեռք-ձէք, առնել-էնէլ բառերում ր-ի անհետացումը: Ն-ն նույնպես կայուն է. բառակարգ-րին անկում է նստել-րստիլ բառում, ինչպես նաև նենգագործ-նէքնակօրծ, անկանիւ-ընկիւ, ինչ-իշ /իշպէս, իշլայի/ բառերում: Առմամուրթի ր-ի ունենք ն-ից առաջացած է հետևյալ բառերում՝ խնստ-խըլլօտ, Ելանել-էլլալ, բանալի-բալլի, շլնի-շրլլի, կղանել-ղլլալ, Ընդհանուր պատմական հնչյունափոխութեամբ լ-ն բառակարգին դարձել է ՚՝ յիշատակ-հիշատակ, լարողել-հաչօղէլ, լղի-հրղի, Յովսէփ-Հօսէփ, Յարութիւն-Հարութիւն, յազօթել-հաթթէլ և այլ բառերում: Բառակարգին անկում է յ-ն հետևյալ բառերում՝ յօնք-ուէք, յիշոց-հիշիչ, յօժար-օժար, յիսուն-իսուն, /իծծուն-ի առկայութեամբ/, յիբաւ-իբավ, յատար-ատաշկ, յարդէրթ, յատակ-լանլատակ: Զ-ի հալիւում ունենք հոտել-հօյալ, բորիկ-պօյպիկ, խոթել-խօթէլ, ցորեան-ցօրէն բառերում: Կրկնակի լ ունենք հետևյալ բառերում՝ ծալել-ծալլէլ, հալել-հալլէլ, Խլել-խրլլէլ, Թալանել-Թալլէլ, բոլորել-բլլլէլ /Պապոսի կրկնակ լ-ի մասին տես, էջ 29/:

Ձայնեղ շփականներ: Դ, Զ, Ժ, Կ, Ծ: Դ-ն կայուն է /դ-ել/, երբ գտնվում է պայթականների մոտ կամ ձայնավորներից հետո՝ աղբ-ակիւ, աղջիկ-ակիւ, աղբատ-ակաո, մազաս-մանս, սատղ-ասի, կողք-կօսկ, մատաղ-մատան, առատաղ-առոտան, եղբայր-ախայ, աղաչանք-ախչանք և տեղ եզրով կազմված հետևյալ բառերում՝ վրտօտ /որտեղ/, անխր /այնտեղ/, նախը /այնտեղ, տախը /այնտեղ/ և այլն: Զ-ի մասնավոր հնչյունափոխութեան դեպքերից են՝ ց-ս հլացումը պայթական ց-ին նախորդելիս՝ ազգ-ասկ /ասկական, ասկրտակր/, վագգէն-վակէն, գգուշ-ուսկուշ: Ձայնավորներից հետո և շնչեղ-խուլ ր-ից առաջ ձայնեղ լ-ն ոչ երկարաբառային դիրքում /խլանում է՝ ազնիւ-ազնիփ, Խայտիւ-խայտիփ /Խայտիփու/, հաւաքել-հաթթէլ, հաւկիթ-հափկիթ, նալ-նափ, Ժ-շ անցում կա միայն դժգոհել-ժուշկօհիլ բառում: Խուլ շփականներ: Ծ, Կ, Խ, Զ, Թ: Խուլ շփականները գրեթե անհնչյունափոխ են: Զ-ի հնչյունափոխութեան է նկատվում հեռու-խէոու, հող-խօղ, հեծանել-խէզնէլ, հեռանալ-խէոունալ, ջրհեղեղ-ժրիէղէղ, ջրհոր-ժրիփօր, մանապարհ-մամպան բառերում:

Հնչյունափոխութեան այլ երկույթների մասին (Անկում, Հալիւում, Դրափոխութեան, Առմամուրթիւն, Տարմամուրթիւն, Կրկնութեան) տես Առնանախոսութեան 145-153 էջերում:

Սիվրի-Հիսարի բարբառի ամենաթեքավոր ներդրումներից մեկը հայերենագիտության ասպարեզում գրաբարով մատենագրությանը և այլ բարբառներով չամանդով բառերն են, որոնք մի բանի տասնյակից անցնում են. նշենք նրանցից մի բանիսը՝

ընծուղ ,, արու հորթ ,, : կրդմէս, ընծուղէրրտ պահէլլ էք մը , գէնէլլ էք մը :

իվ ,, ծար ,, : կրտավին իվը իվին տիր :

Պոտառ ,, խոճկոր ,, : Ակամորին պոտառէրրս փուռը իչէցրնէլլ էնք :

Կոմ ,, մսի փափուկ շերտ ,, :

Թօսիլ ,, խոչել , եղջերահարել , ճարու տալ ,, : Պարխի-էգ կիպի թօսէլլ էս :

Ջուրակ ,, գեղեցիկ , գարդարանք ,, Յերևս զուգ-ել , զուգս արմատից :

Լախիթէլ ,, ճոզնել , ուժասպառվել ,, : Պանէցանք-պանէցանք լախիթէցանք :

Քէրչ ,, նուրբ ծաղր ,, : Պարմսպարս կէլէծվէլիքէն քէրչի կրպրոնէր ժողպօղէրուն :

Յրփսի ,, Լահորի նուրբ շալ ,, : Մայրս պուռուքին մէչը մէքաթ ա ցրփսի տրրած էր :

Օրօկօսկօր ,, թղնաշար ,, : Օրօկօսկօրը կրցամի էրէր :

Պօտիմ ,, Բայնաբերան մեծ կճուճ ,, : Արթարի յէղը պօտիմէրուն մէչն ա կուլ էլէյանք :

Համուկ ,, թերմացք ,, : Լյամ-Յի արմատից / :

Մրումրուկ ,, նորահաս գինի , մածո , նոր խմորվող գինի ,, : Մրումրուկը կարասէրուն մէչը կուլ էլէյանք :

Հէրէնի ,, փոքր կաթսա ,, : Հածօ , հէրէնին պէր , էկօցէք խալկինն ա տանինք :

Շաղավարտ ,, շահ , օգուտ ,, , օգուտործվում է շահ-շաղավարտ բառի հետ միասին . էս պտօ մէչը շահ-շաղավարտ չունիմ :

Խօյսիլ ,, Լվագքից հետո մնացած բիծ ,, Խոյս արմատից / : Ատ մէնծ լէքէն խօյսէր է :

Վօքըրթէթ ,, աղաշոր , Լոռ-քթթի / : Պարույրին մէչը տրվող կրտավին վօքըրթէթ կրտէյանք :

Վանդաստան ,, թափոտ վաղ ,, վանդեն-ստան / : Վանաստանէն քըշէրատախ կրպանէյանք :

Քրթէթկուլլօի ,, սղջիկ , կին , իգական սեռ ,, Լքթթ-գլուխ / : Քրթէթկուլլօի տէրը վրլասկ ուլնին այսօր :

Տօպինս ,, յաշանած ,, : Տօպինս անունը Տիրօնցա է :

Տօպինք ,, նշանդրեք ,, : Աշունը քուրար մը տօպինքէրը կրկրծծէյին :

Տալղուճ ,, Վճուճ ,, : Մէ սիրուն , առվակ տալղուճ ուլնէյանք Լուլնէյինք / : Առվակ ,, գեղեցիկ , Լավ , սիրուն ,, Լոռ-աժել-Յի / : Մէ առվակ-առվակ ախչի-նէր ուլնէյինք Սիվրի-Հիսար :

Օրթօտ ,, արբատ , էտած խաղողի ծյուղեր ,, Լորթ-յօտ / : Հածօ , օրթօտէրը մէ քաղրնվէցէք հայինք :

Շրփացուկ ,, Երես առած , Լկսոված ,, Լշփանալ արմատից / : Ատ շրփացուկը քոյօնքէտ է :

Փրթիվէլ ,, Կատուկել , դուրս թափվել , պոռթել ,, Լպտուղ-ուլել / : Աշկիտ Լ'հիսը փրթիւրվի :

Օխմօտար ,, հեռու քարեկամ , ազակամ ,, Լօխտ-ն-օտար / : Օխմօտար ասկակա-նէրը կինէ միսափիր էկած էն :

Անկարի ,, անուժ , անկարող , անուժ , ապիկար ,, Լան-կար-ի / : Անկարի ավանակին մէյն է :

Տարցուկ ,, փստունք ,, Լ դարծ-ուկ / : Կանէլանք է , տարցուկ կիպի մարթ է :

Կանէլանք ,, զգվանք ,, Լգան-ել-անք / : Կանէլանքը էկավ :

Տրծխէլ ,, Ղոճ-կ-եղի , խեժոտել , զիրանալ ,, : Օխմարէրը կրտրծխէյան :

Էքկիթ ,, այգեկուծ , մրգաբաղ ,, Լալգի-կիթ / : Էքկիթին Հայինկէղ կէթայինք : Ջէննիք ,, մսացու , մորթելու , մորթված անասուն ,, Լգեն-ել-իք / : Պարխի-էճն ա զէննիք էնէլլ էնք :

Պրնկրլտախ ,, զանգի գագաթը , հելք ,, : Պրնկրլտախիտ կաս :

Տարտօցէլ ,, խմորի գնդեր սարթել ,, : Հարսնախչինէրը խրմօրը տարտօցէյին կար :

Ուրուվա ,, Լավաշ քացելիս գրտնակին ցանվող ալյուրը ,, : Մէծիք ուրուվա ցանէյիր նա , խրմօրը չէր կրպնէր :

Շրլլտէլ ,, խարխախել մթուռթան մեջ ,, : Ճորաքէրը դօտուրած էր , մուրին մէչը շրլլտէլէն կայլէցի տուրս :

Մընծիլ ,, վերքի նեխելը ,, : Այրունծօրթ էնած էյին մէչկրս , յարան մընծէր էր :

Ղանշախ ,, մի տեսակ խաշ՝ կովի , եգան զլից , զինգերից , Լեզվից , Պարկեն-թանքին , հաշնիքէրուն ղանշախն ա պակաս չէր :

Ճօղալ ,, հորանջել , ձգվել ,, Ֆ Ճեղ-ալ / : Պարլ'հիսին ա Ճօղալ կէնաս :

Ճրղլ ,, հավի մագիլի ետևի կեռ մատը ,, : Մէ խօսօղ ուլնէյինք մէնծ-մէնծ ճրղալէրօվ :

Սըղըրթուկ ,, քերուկ , քերվածք ,, Լգ-քերթ-ուկ , սկրղ-ուկ / : Ատ սըղըր - թուկէրը հավէրուն տուրէր :

Թէթիկ ,, շտապ , արագորեն ,, Լգրք . ի թեթուլ մատչել , Թմ թեթևիկ / : Հարս-ախչին , մէ թէթիկ-թէթիկ տալղուճէրը վրլա :

Յուլցանք ,, ծաղրի առարկա ,, Լցուլց-անք / : Այրիկը ցուլցանք կիպի մէյն է :

Իմաստաբանութիւն: Իմաստափոխութիւն: Գրաբարի հետ ընդհանուր բառերից շատերը կրել են իմաստների որոշ փոփոխութիւններ. գործ են ած - վում նոր, փոխաբերական կամ նեղ ու լայն նշանակութիւններով: Այսպէս՝ ժամանել / կարք. 1. զալ, հասնել, 2. ժամանակ գտնել, 1 - ժըմնէլ «ծնվել», աշխարհ գալ, «ճշարտութիւն հին ամիս յետքը տէտիք ժըմնէլ է: Առու / կարք. 1. հոսող ջուր, 2. ջրի հուն / - առու գործ է ածվում նաև «յագերի սանրվածքի բաժանման գիծ», նշանակութիւնը: Ասխրթ / մարի / կարք. յուղալի փայտ - գործ է ածվում «կպչան - լուցկի», նշանակութիւնը: Պեղել / կարք. փորել հանել, օրհոր, փոս բացել, կրել, համբերել / - պողէլ «ընդեղենները մաքրել աղբից, քարերից», : Պատել / կարք. փաթաթել, չորս կողմից փակել, պատանել / - պատէլ «բարբառում նշանակում է «քինել, անել, սարքել», օր.՝ Քշ կապտէս լինել ես սարքում կամ անում է: Գալիք / կարք. ինչ որ գալու է / - կալիք 1. «պատահար, փորձանք», գործ է ածվում անծրի մեջ՝ կալիքի ուղիս / կործանքի հանդիպել: Լալիք / կարք. ողբ, լաց / - լալիք «նվագ ուրբաթ օր»: Ծանուցում / կարք. հայտարարութիւն / - ծանուցում «կրօնական քարոզ», և պաշտ: Առանձին մի հոլմը են կազմում նման կրօնական բառերը, որոնք բարբառում գործ են ածվում հատուկ նշանակութիւնը՝ Աղասք / ախակ «Մեծ պահք, լաղ-հացք /: Ծաշակ «հողորդութիւն», - գրք. համոես, քանի մը փորձ, զավաթ: Հիշէլիք «հանգուցյալի հոգուն նվիրված հոգեհաց, ճաշ», - գրք. հիշատակ: Հիշտէկ էնէլ «շարաթ երեկոյան տան անկյուններում ի հիշատակ մեռած - ների հունկ ծիւլ: Ծամ աշէլ, ձոմ բոնել, ծոմ պահել՝ - գրք. ծոմ «կատարյալ պահք, օրը մեկ ժում ուտել»: Ծոմ ալրէլ «ծոմը խախտել»: Աղօսկի կանկիլ «աղոթել», - գրք. յաղօթս / կանգնիլ: Կաղանտէք «նոր տարվա նվեր», - գրք. կաղանդէք: Ալրտիս «նոր տարվա աշքալուսներ», - գրք. ալետիք «քարի լուր, խոստում», : Ատէն «հանդերձյալ աշխարհ», - գրք. ալն-դեհն «այն կողմը», : Ատէներ «այս աշխարհը, այս կողմը», - գրք. ալս-դեհն : Փտթէփառցում «Համբարձման տոնը», - գրք. փտթ - բարձր մն, Համբարձում: Կորշէլ «համբուրել սրբազան մի բան», : Կարամուր «ալ, «խիթարական հոսքեր տան հանգուցյալի հարազատներին: Կաս էնէլ «թողման ձեռ կատարել», : Եվ այլն: Պարկատու «Մեծ պահքին առաստաղից կանխած սոխը իր 7 փետուրներով, որոնց-ցից յուրաքանչյուր շարաթ մեկը հանվում է, կպահք-ա-տրի /:

Բառակազմութիւն / Բառաբարդացում և ածանցում /: Սիվրի-Հիսարի բարբառի նախաիրած ձևերից են երկրադարիչ համադրական անհոգակապ բարդութիւնները՝ բարկօփ, էքկիթ, սուտարուց, անկաժտօրիս, ժրհժօր և պի: բ / ավելի նվագ հողակապով կազմութիւնները՝ նէքնակօրծ, քրշէրատախ, քիտամասիկ, պօրտատու, մարթամօտ և այլն: գ / նէ շողկապով կազմութիւններ՝ կէրուխում, առուտուր, սուտուփուտ դ / Հարադրալորներից անվան և բայի հարադրութիւնը՝ պաք աշէլ, ծօմ պըյնէլ, սուտ խօսէլ, պրօսկ էնէլ, աղօսկի կանկիլ և այլն: ե / երկու բայերով՝ էփէլ-թափէլ, ուտէլ-խըմէլ, ավէլ-հօրթէլ և այլն: զ / Արմատի կրկնութիւնը / Իմաստի սաստկացում /՝ կայմուր-կայմուր, սէվ-սէվ, մանտրը-մանտրը, ասնակ-ասնակ «այսպես-այսպես», և այլն: է / երկրորդ բաղադրիչի նախամասնիկի հնչյունափոխութիւնը՝ սուսիկ - փուսիկ, սուտան-փուտան, տօք-փտօք, աման-չաման և այլն: ը / Հոմանիչ կամ իմաստով մոտ քառերի հարադրութիւնը՝ խօղ-մարիլ, հարկ-հարկինք, օր-արէվ, խունտում-ցունծում, էրթում-ժարթում և այլն: թ / Բաղադրիչներից մեկը փոխառյալ քառով՝ պուք-պօրան, տին-համառ, հաշիվ-հէսապ, փայ-պաժին, չէլիկ-պօղպատ և այլն: ժ / Հայերեն քառերին կցված փոխառյալ ածանցներով՝ մայլու-աեչինլու, ի / Լրիվ փոխառյալ քառերից՝ հուրի-փէրի, չօլու-չօմու և այլն: 9. Զեվլա ԱնՈՒԹՅՈՒՆ
ննչպես արդեն նշվել է, Սիվրի-Հիսարի բարբառում թվի քերականական կարգը հասել է իր կատարելութիւնը և հոգնակին կերտվում է միայն մեկ՝ էր ձևով, օր.՝ օկկէր, օսկիլէր, փէսագուլէր, հարունցու-լէր, էքիլէր, լէռէր, մատէր և այլն: Խոսնակ էլ 29 /: Ննչպես գրական լեզվում, այնպես էլ բարբառում հոլովումների թիվը ձգտում է նվազագույնի հասցնել՝ Թողնելով ի-ն եզակի, ը-ն հոգնակի թվի համար Խոսնակ էլ 29 /: Ներգոյական հոլով չունի: Ածական անուն: Ավելի հաճախ գործածվողներից են՝ չօղ «տաք», առվակ «Բեղեցիկ», լավ, «կրճատ», հարժ, կտրած, կոլոտ, «խէվ», խենթ, և այլն: Բաղադրական կազմում է բացառական ինդրով՝ առօմէ պուլուզ, իզնէ մէնծ, պպէն խօլօք, քուլէն առվակ և այլն: Ավելի բառի օգնութիւնը՝ ավիլի մէնծ, ավիլի խօլօք, ավիլի շօղ և այլն: Համախ ավիլի-ն փոխարինվում է փոխառյալ քառով՝ տահա խօլօք, տահա պուլուզ և այլն: Գերադրական աստիճանը ամէն բառի բացառականի հարադրութիւնը է՝ ամէնէն առվակ, ամէնէն անուշ, ամէնէն ղայմուր և այլն: Կամ հայերենի պինտ բառի օգնութիւնը՝ պինտ աղէկ, պինտ խօլօք և այլն, որը համախ է փոխարինվում Թուրք. պէթէր «սաստիկ», քառով՝ պէթէր լախթաձ, պէթէր ցէխօտ, պէթէր մօտ, պէթէր ժըլուց և այլն: Հ. Ամառյանը, բերելով ձրնկ-տէղին «բոլորովին դեղին», լէռ-կապուտ «խիտ կապույտ», ածականները, անվանում է «նախամասնիկավոր գերադրական», ԼԶՂԼ, 3, է120 /:

Թվական անուն: Բանակականներն են՝ մէլ/մէկ, էրկու, ըրէք /ըրէք, շէկ/, և այլն: Դասականներ են կերտում -ըօրթ/-էրօրթ ածանցներով՝ էրկրօրթ, ըրէրէրթ, տասնէրթ և այլն: Առաջին-ը լինում է առչի, առչին: Բաշխական են կազմում կրկնութիւնը բանակականներից՝ վէս-վէս, շէք-շէք/ըրէք-ըրէք, հինկ-հինկ և այլն: Ավելի հաճախ նաև հատ բառի հետ՝ մէլմէքաթ, ըրէք-ըրէքաթ, հինկ-հինկաթ և այլն:

Դերանուն: Անձնականի երրորդ դեմքի համար օգտագործվում է ան, անօնք ցուցականը: հնքը անձնականի սեռականը լինում է ինգիր /զրաք. հնքն հէք ձևերից/: Շատ հարուստ են ցուցականները, որոնց երկրորդ դեմքը հավասարապես գործ է ածվում հաճախ որպես առաջին դեմք: առ, ան, տան, նան, տանը, նանը, անկեր, հանգնակ, ածծոնակ, նահսրնակ, տահսրնակ, նահանծնակ, տահանցնակ, տանց, նանց և այլն: Տաքը, նախը կազմված են ալդ-տեղը, ալն-տեղը, անկեր՝ ալնկողմը բառերի հարադրումից:

Հարգական-հարաբերականներն են՝ հշ/ինչ, հնչիկ /ինչ-իրթ/, Իփիս /ինչ-պէս/, օվ/վօվ, վօր, վրտօխ /որ տեղ/, յէփ, ուր և այլն:

Բայ: Փաստորեն հին հայերենի չորս լծորդութիւններն էլ պահպանել է Սիվրի-Հիսարի բարբառը: -ուլ -ը այլուր անհետացել է, սակայն այստեղ գտնում ենք՝ առնուլ, կրննուլ, ըլլէնուլ, մըննուլ, տանուլ, թօղուլ և այլն: Դերբայներից զիտե Գիեգը՝ անորոշ, ապառնի, հարակատար, ենթակայական, ձևի /ընթագակցական/, Ան սոսկածանցավորների ծայնավորը չի պահպանվում՝ խածանել-խազնել, լոզանալ-լօքնալ, հասանել-հասնիլ, ծը-նանել-ծընիլ, թուլանալ-թիլնալ և այլն: Զի պահպանվում է սոսկածանցը՝ դիպել-տրպիլ, թռչել-թրոիլ, սառչել-սառէլ, կորչել-կօրիլ և այլն: Նղանակային ձևերը հինգն են: ներկան կազմվում է երեք բայերի օգնութեամբ՝ կար¹, կէնամ², էրէք³ որոնք, տևականութեան նշանակութիւնը աստիճանաբար կորցնելով, կարծես պարզ ներկա կազմող բայեր են մնում:

Ըղծական ապառնու և անցյալի ապառնու հետ հարադրվելով կար-ը չի խոնարհվում, ինչպես կէնամ-ը, այլ միշտ մնում է անփոփոխ՝ կարթամ կար, կարթաս կար, կարթա կար, կարթայի կար, կարթայիր կար, կարթար կար:

Զի խոնարհվում նաև էրէք-ը, որը անսահմանափակ գործածութիւն ունի տարբեր ժամանակների հետ և նույնիսկ անցյալ կատարյալի վրա է դրվում՝ կարթացի էրէր, կարթացիր էրէր, կարթաց էրէր և այլն:

Նէնամ-ը, հարադրվելով ըղծական-սահմանական բայերին, խոնարհվում է՝ խօրիմ կէնամ, խօրիս կէնաս, խօրի կէնա, խօրինք կէնանք, խօրիք կէնաք, խօրին կէնան: Անց. անկ. խօրէյի կէնայի, խօրէյիր կէնայիր, խօրէր կէնար; խօրէյիրք կէնայիրք, խօրէյիք կէնայիք, խօրէյին կէնային:

- 1. Այստեղյանը կար-ը բնեցում է զրաբարյան կամ բայի անցյալի եզակի երրորդ դեմքից, որ լինում է կայր /տես Ա. Այստեղյան, էջ 76-77/:
- 2. էրէք-ը կարելի է ենթադրել, որ ծագում է եղբոր ձևից և ոչ թե էր օժանդակ բայի կրկնված ձևից:

Հարկադրականի ապառնի և անցյալ ապառնի /ապակատար/ ժամանակները նուլյն են սահմանականի ապառնու և անցյալ ապառնու հետ: Օրինակ, կարթալ էմ, կարթալ էս, կարթալ է, կարթալ էնք, կարթալ էք, կարթալէն կարթալ էյի, կարթալ էյիր, կարթալ էր և այլն հավասարապես նշանակում են և կարթալու եմ, և պիտի կարթամ, իսկ կարթալ էյի նշանակում է և կարթալու էի, և պիտի կարթայի: Փաստորեն պիտի լպետք է/ եղանակիչը չի ծանաչում բարբառը: Արգելական հրամայականի և ժխտական խոնարհման ժառի խոսվել է էջ 29-ում: Անկանոն բայերից մի բանիսը խոնարհվում են որպես կանոնավորներ՝ առնել-էնէլ անցյալ կատարյալում լինում է՝ էնէցի, էնէցիր, էնէց, էնէցինք, էնէցիք, էնէցին:

Փոխանակ արարել-ըրել, ըրել, ըրալ, ըրելք, ըրելք /փոխ. ըրէք, ըրէք/ արգել. հր. մէնէլ, մէնէք և այլն: Ժխտական խոնարհման ժամանակ սահմանական եղանակի ներկա է կազմվում է ժխտական մասնիկը կցելով անորոշ դերբային /ավելի ծիշտ դա անկատարն է առանց -իս մասնիկի՝ նէսուրքս շրիօսէլ, չուտէլ, պան ա չէնէլ /Սկեսուրս չի խոսում, չի ուտում, գործ էլ չի անում/: տես նաև էջ 29/:

Մակբայ: Բարբառի գերադասած մակբայակերտ միջոցներից է կրկնավորումը՝ առէն-առէն, տաք-տաք /տաքը-տաքին/, վրա-վրայի, խօ-խօ, թէթիկ-թէթիկ, ծիվան-ծիվան, թիլիկ-թիլիկ, հրվալէն-հրվալէն և այլն /ձևի մակբայներ/: Ժամանակի մակբայներից են՝ վաղնէ, քօշէրատաթ, վանդաստան, հրմածուկ և այլն: Տեղի մակբայներից են՝ վէրնօղօթ, վայն-օղօթ, տէմորմագ և այլն: Չափի՝ միթիկ, միթիկի, միթիք, աղաատախ և այլն: Փոխառյալ -իքէն Խելիս, ժամանակ, /բառ, մասնիկի օգնութեամբ հայերեն բառերից ժամանակի մակբայներ է կերտում՝ լ՛ոննիքէն է-թալ էնք, չօճուիքէն սօրվէլ է: Փոխառյալ տա / / ածանցի օգնութեամբ թե տեղի, թե ժամանակի մակբայներ է կերտում՝ խանութա ըստած տեղը պապէրնիս հուլանթագալ: Անօ լ՛օգուն պասվէթ թօ ըլլա /նրա լեզուն թող բացվելիս լինի/, փոխառյալ -լայի ածանցի օգնութեամբ կերտվում են ձևի մակբայներ՝ իշլայի /իշչպես/, ըյօլլայի /կույրավարի/, և այլն:

Կապերից պիտի նշել տօր-ը /ընդ որ/, յինչև, Տօր իրկուն ըստեղ էնք: Նօյ նահապէտը իչած Այրարատին վօրիք, տակը, ստորոտը: Անօ էրէսէն մայր շուտ մէռավ /նրա պատճառով/ և այլն: Տաղկակներից առկա են՝ այլ -ա, յա, /Գուլուգ ախպայն ա ըսած՝ ինծի յա տուրէր/: նալ-նա /Միքրըս ըլլա նա, բրսիմ /: Չէ նալ-չէնա /էթալ էս, չէնա մընալէս/ և այլն:

Նղանակավորող բառերից են օղօթ, պատարաք, չէնա, ավլի կինէ, և այլն: Չալնարկութիւնները՝ հածօ /հալդա ծո/, հալ մէ /հալիւր մի/, ըպրյ, հէյ վախ, քալա, հապա, մէղա, սսված, ծրշմարիտ սսված և այլն:

ԵՐՐՈՐԴ ՄԱՍ

Ս Թ Ա Ն Ո Ջ Ի Բ Ա Ր Բ Ա Ռ Ը

Հ. Ածառյանը Անտոնիայում գտնվող հայ գաղթօջախների մասին հոսու-
լիս Սթանոզի բարբառը հիշատակում է որպես հայերենը պահպանած գաղուծ:

Բանի որ այս բարբառով հրապարակված ընդամենը մեկ բնագիր է եղել,
ուստի Հ. Ածառյանը ենթադրաբար այն համարում է, մյուսների հետ միասին,
/նալլը խան, Սիվրի-Հիսար/ «Վիլիկիո ենթադրաբառներ»¹

Ինչպես արդեն ցույց ենք տվել, ենթադրությունը չի հիմնավորված
համապատասխան փաստերով: Սթանոզի գաղթօջախը հավանաբար հիմնադրվել է
է Սիվրի-Հիսարի և շրջակա մյուս գաղթօջախների հետ 11-12-րդ դարերում:

Սթանոզի բարբառը իր ներկա կազմող /տեղական/ կար մասնիկով նման
է Սիվրի-Հիսարի բարբառին, սակայն պայթական-բաղաձայնական երկաստի-
ժան համակարգով և հնչյունական այլ անցումներով, բառապաշարով նրա-
նից տարբերվում է, ուստի Գ. Ջահուկյանի 100 հատկանիշանոց դասակարգ-
ման համաձայն այն կարող է համարվել հայերենի ուրույն բարբառներից
մեկը: Այդպես էլ մինք ներկայացրել ենք այն «չայկական Սովետական
Հանրագիտարանում», : Ունի 44 հնչյուն, որից 10-ը ձայնավոր: Հնչյու-
նական մակարդակում պայթական և կիսաշփական հնչյունները ներկայաց -
նում են եռանդամ /եռաշարք/ հակադրություն՝ բ, պ, փ, գ, կ, ք, ղ, տ, թ,
ձ, ծ, ց, ղ, ժ, չ, , ինչպես նաև քմայնացած կոկորդայիններ՝ կ, ղ, ղ, ղ:

Երկբարբառներից այլ-ը պահպանվել է՝ հայս-հայս ,, խմոր,, ,, փայտ-
փայտ, այս-այս, այդ-այդ, հայր-հայր, մայր-մայր, վայր-վայր :

Գրաբարյան իւ-ի դիմաց ունենք իւ՝ հնուլիւ-հիլիուլիւն, շնու-
թիւն-շունուլիւն, և այլն: նաև ունենք իւ-ուլ անցումը՝ ձիւն-ձուլիւն,
սիւն-սուլիւն բառերում: Ուլ-ի դիմաց շեշտի տակ ունենք ուլ՝ ըղիւ-
ըուլիւ, ըղլր-ըուլր, գոլիւ-գուլիւ և այլն:

Հին հայերենի եա-ի դիմաց ունենք է՝ ղայեակ-ղայէկ, վառեակ-վա-
ռէկ, երկաթեայ-էրգաթէ, ոսկեայ-օսգէ և այլն /կա նաև օսկիլէ/:

Ձայնավորների հնչյունափոխությունից նշենք ա-ա՝ անցումը /ա-ի
շրթնայնացումը/ շեշտի տակ ձայնորդներից առաջ՝ բերան-բէրն, գերան-
գէրն, Մարիամ-Մարթմ, և այլն: Ա-է հնչյունափոխություն ունենք
ձայնորդներից առաջ շեշտանախորդ դիրքում՝ անկեալ-էնգէլ, ականջ-էնջ
գէջ, առնել-էնէլ և այլն: Ենշտանախորդ ե-ի հնչյունափոխություն ու-
նենք հետևյալ բառերում՝ երեք-իրէք, երեկոյն-իրգուն, լուրզուն, վե-
րայն-վիրան և այլն: Համեմատաբար կայուն է ի-ն: է-ի անցումը՝ ըզվը-ըօվի:

Բաղաձայնների հնչյունափոխությունը: Բառասկզբում, ձայնավորնե-
րից, ձայնորդներից հետո իուլերը ձայնեղանում են՝ պարտք-բարք, պա-
հել-բահէլ, վարպետ-վարբէդ, պահով-աբհով, կտու-գադու, առամ-աղամ,
արտ-արդ, տուն-դուն, մուտ-ջուդ, կարծ-գարջ, մակառ-ջագադ և այլն:

Հ. Ածառյան, Հայ բարբառագիտություն, Սոսկուա-նոր նախընթաց, 1911, էջ 205:

Բառավերջին նկատվում է կ/զ-յ անցում՝ դանակ-դանայ, մեկ-մէյ,
բարակ-բարայ, նամակ-նամայ և այլն: նման հնչյունափոխությունը հաս-
կանշական է Հալիսի հովտի, Գամիրքի հայ բարբառներին: Բառամիջում
ձայնավորներից հետո նկատվում է յ-ի հավելում՝ հորել-հօլրէլ, ցո-
րեան-ցօլրէն, հնուլիւ-հիլիուլիւն, հոտել-հօլտէլ և այլն:

Մեծ դիվ են կազմում դրափոխությունները՝ կշոք-գրոշէք, սանդերք-
սանէք, հարիւր-հէյրու, փշրանք-փրոշանք, փշուր-փրոշուր, ականջ-էն-
գէջ, հատոր-սրիդօր, կամուրջ-գարմունջ, տաքակ-դօրքակ, գրուգել-գու-
ցէլ, արիւն-այրուն և այլն:

Ջգալի բանակ են կազմում նաև հնչյունական անկումները՝ կտած-գը-
րաս, րնտրել-հրտէլ, հարիւր-հէյրու, գտանել-գուննուլ, մտանել-մուն-
նուլ, շնորհաւոր-շընափօր, պահր-պաք, սկեսուր-գէսուր, աղիւլ-աթէլ,
ջրաղաց/ը/-ջղացք, ողկոյց-գուգ, միտք-միկկ, ոտք-օկկ, տէրնդայս-
դէրնդայս և այլն: Կան նաև ամփոփումներ՝ օրորոցք-օրօք, օրորան-օրան,
ծանապարհ-ծամփա և այլն:

Ձևաբանություն: Գոյական մուն: Հոգնակերտներն են՝ -էր, -նէր,
-էնք, -օնք, -դանք, -դօնք, -քինէր: Վերջինը ավելացվում է հատկապես
ստացական դերանուններին՝ մէրքինէր, ձէրքինէր, այնօնքինէր, ալ-
նօնցինէր և այլն:

Ածականի համեմատության աստիճանը կազմվում է ավա կամ էվլի և փո-
խառյալ դահա բառերի օգնությամբ՝ աղէգ-էվլի աղէգ, դահա աղէգ

իւվ-էվլի իւվ, դահա իւվ և այլն:

Թվականների դասական փոխառյալ -ինջի ածանցի օգնությամբ է կազմվում՝
բիրինջի, քրէքիքի, դասինջի, դասմէգինջի և այլն:

Պերանունների մեջ անսովորը -ի ձայնավորի և-ըզի մասնիկի հավելու-
մըն է՝ ինքի, իրէնքի, ինձի, ինձիգի, քէգի, քէգիգի, իրէգի, ձէգի,
ձէգիգի, մէգի, մէգիգի և այլն: Փոխադարձ դերանուններն են՝ իւրքիգի,
մէլմէգու, իրէրիգի: Ցուցականներից հանր, դանր, նանր, սըրք, դըրք, նըրք,
այսէգուն, այդէգուն, այնէգուն /այսպես, այդպես, այնպես/, հանգընա,
այդէգան /այդպես/, այնէգան /այնպես/, այսէգան /այսպես/ և այլն:

Դուլ -ը գրաբարյան գոլի ,, նման, պես, ձևով,, իսկ -գան-ը գան
յիւրպ, ձևով, պես, բառից է ծագում: Իհարկե ծագումով պահլիպիւրեն:

Բայ: Ունի հինգ եղանակային ձևեր: Սահմանական ներկան կազմվում է
պայմանականի ապառնուց կար մասնիկի հարադրությամբ՝ կէրթամ կար և այլն:
Տեղականության իմաստը շատ հաճախ չի գիտակցվում կար-ի մեջ: Անցյալ
անկատարի ձևերում կար-ը չի խոնարհվում՝ կէրթայի կար, կրկարթայի կար:
Ազգակատարը նման է՝ Սիվրի-Հիսարին, սակայն առանց կրկնակ լ-ի էթալ էմ:

Գրաբարյան օժանդակ բայի խոնարհմանը մոտ է և ներկայի, և անց. ան-
կատարի ձևերում՝ էմ, էս է, էնք, էք էն
էյա, էյար էր, էյանք, էյաք, էյան /ոժանք, սակայն
արդեն գործ են ածում էյի, էյիր, էր, էյինք, էյիր, էյին ձևերը:

ՄՈՒՐՈՒԴԱՆ-ՅԱՅԼԱՆ- ԶԱԼԴԱՐԱՅԻ ԲԱՐՔԱՐ

Ասքարյայի հովտի հայ բարբառները բավական շատ են և միմյանցից տար-
բեր: Համեմատաբար շատ ընդհանրություններ ունեն նրանցից ալոհներ
հոսքածքները կամ բարբառները, որոնք բնակվում են Մուրղթա, Յայլա,
Չալդարա, Գյուղաղ, Ասարթուխ, Թիրքմեն գյուղերում: Ըստ բանավոր ա-
վանդություն, այս գաղթօջախների բնակիչները գաղթել են Արածանիի ափե-
րից, որի հիշատակին էլ իրենց նոր բնակավայրը կոչել են Մուրղաղայ:

Ա. Ալպոյաճյանի կարծիքով այս վայրերի բնակչությունը պիտի եկած
լինի հարևան Բուրսայի, Աք Մեհիրի, Սիվրի-Հիսարի, Սթանոզի, Քայապա-
գարի և Անկյուրայի հետ 14-15-րդ դարերում: ¹ Ըստ Նաթանյան Գողոս
վարդապետի տվյալների բավական ստվար հայ բնակչություն կար հիշյալ
հայ գաղթօջախներում: ² Մուրղաղայ-Յայլա-Չալդարայի բարբառի մասին եր-
բուե ոչինչ չի գրվել և ոչ մի նմուշ չի հրատարակվել: Մինչդեռ այն հա-
յերեն բարբառների մեջ իր ուրույն տեղն ունի և, ըստ Գ. Պահուկյանի 100
հատկանիշյան դասակարգման, միանգամայն ինքնուրույն բարբառ է: Այն ու-
նի իրեն հատուկ բառապաշարը, եռաստիման պայթական բաղաձայնների հա-
մակարգ և հայերեն բարբառագիտական բարտեզի համար շատ անհրաժեշտ ձե-
վաբանական բազմաթիվ յուրօրինակ դրսևորումներ:

Հնչյունաբանություն: ինչպես նշեցինք, Մուրղաղայի բարբառի պայ-
թական-բաղաձայնական համակարգը ավանդական հայկականն է, որը արևմտյան
կը խմբակցության բարբառների մեջ հազվադեպ երևույթ է: Ուրեմն բառա-
սկզբին ձայնեղներն ու խուլերը մտում են անփոփոխ, ինչպես նաև շնչեղ-
խուլերը, իսկ ձայնավորներից ու ձայնորդներից հետո ձայնեղները շնչեղ-
խլանում են, իսկ խուլերը հիմնականում ձայնեղանում: Հետաքրքրական է
ցս-հ հնչյունափոխությունը՝ այս-ի-էհի, ալս-հանգ = ահանգ, ալս-օր =
էհօր: Մեկ և կես վանկանի ը-ով ավարտվող բառերը կրում են հետևյալ հըն-
չյունափոխությունները՝ բաղցը-բաբսը, բարձը-բարսը, թանձը-թազը, մանը-
մայրը, թանի-թայրը: Տան կապակցությունից ընկնում է տ-ն՝ մատանի-մաննի,
գտանել-գրննալ, մտանել-մըննալ: Ա ձայնավորը և ալ -ը լինում են Թ 757:

Ձևաբանություն: Գոյական անուն: ի տարբերություն մյուս բարբառների,
որոնք զարգացել են բազմաթիվ հոգնակերտներից ազատվելու և միօրինակաց-
ման հասնելու ուղով, Մուրղաղայը, ընդհակառակը պահել է Միջին հայերե-
նի բազմաթիվ հոգնակերտներն ու նույնիսկ երկակիություն - վի ձևույթ:
Հոգնակերտներն են՝ -էր, -նէր, -սդան, -վի, -նի, -ք և կրկնակիացած՝
-ստաննի, -տաննի, -վրոնք, լնո-լնոնէր, քինթ-քնթէր, անպնր-անպնրնի,
հայվան-հայվաննի, բեցիլ-բեցիլնի, էքի-էքեստաննի, լեքեստաննի, մաննի-
մաննեստաննի, յաննի, բալե-բալեստաննի, ննամի-եքնամեստաննի և այլն:

1. Ա. Ալպոյաճյան, Գատութիև Եղղկիոյ հայոց, Գահիրե, 1956, էջ 392:
2. Ըստ Նաթանյանի, Տեղեկագրություն ընդհանուր վիճակի Գողատիոյ, 19-րդ
դարում Մուրղաղայն ունեց 650 տուն, Գյուղաղը՝ 260, Ասարթուխը՝ 400, Չալ-
դարան՝ 550 և Թիրքմենը՝ 170 տուն հայ բնակչություն:

Ածական անուն: Նախասիրված ածականներից են՝ նօրսը, նոսր, բարսը,
բարձր, բարսը, բաղցր, միսկին, կեղտոտ, բարով, ալալ, և այլն:
Որակականների համեմատության աստիճանը կազմվում է քրնց լքանց / բա-
ռի օզնություն՝ էս մէնձ իմ քրնց էլպէրս: Քրնց թուրքա բաշխ դուշ-
ման չունինք: Երբեմն օգտագործում են թուրքերենի դահան՝ Ասի դահա
բարով է էղէր: Գերադրական աստիճան է կազմվում պինդ կամ պիտ բառի
օզնություն՝ Հարսէրնուս էփածը պինդ անուշ է: Երբեմն նաև ամմէնէն
բառի օզնություն՝ Ամմէնէն բարսը մէր տանէսն էր:

Գերանուններից հետաքրքրական է գրաբարյան ը-ի գործածությունը՝ վճ
րսաց: Հարցական-հարաբերականներից վօվ, փր, վօրու, ինդօր, օրի ինչո
Հետաքրքրական է ընծիս ձևը՝ Ընծիմ բյուլֆուր կէնէս կօր, ընծիս տրծէ-
ծէս:

Բայ: Անդամ ձևերից հարակատարի իմաստով գործ է ածում ուկ վերջա-
վորություն՝ սահմանափակ դերբայներ՝ դըրմուկ, զըրմուկ, հարմուկ, որը
հավանաբար արդեն կորցրել է դերբայակերտ նշանակությունը: Ժխտական
խոնարհման հարկադրականը լինում է չըտտը՝ չըտտըհօսիմ, չըտտը առնիմ
և այլն, իսկ դրական խոնարհման ժամանակ՝ տէրթա, տուտիմ, տըտիսնամ ևն:
Ձուգահեռաբար գործ է ածվում նաև պըտօր լպիտի որլ, որը հավանաբար
հարևան բարբառներից կրած ազդեցություն արդյունք է՝ Հաշտ աղանգ, չըտտը-
տանէյինք, տըթօղէյինք պըտօր: Օրի՞ պըտօր չառնէյիր:

Մակբայ: Բարբառի նախասիրած մակբայներից են հա բրոա-հա բրոա կամ
հա վիրա-հա վիրա, սնընդհատ, Իժըրգնին հա վիրա-հա վիրա մէրդօք հաս
կուզին կօր: Չարուք չտսպ, արագ, վանգուց, առավոտ վաղ, ընծիսթէն
դեպի ինձ, իմ կողմը, էսկըթէնը, այս կողմերը, դէրվէրնըթէն դեպի
բարձունքը, վերք, և այլն:

Կայ: Բարբառի նախասիրած կապերից են՝ հէղ, սնզամ, չախ, թախ հնց
էնգու, այդ պատճառով, դրա համար, դըր, մինչև, և այլն:

Տողկապներից ալլ-ըլ, որ-օր/յօր, ու-ուք/ուկ, նայ-նը և այլն:

Եղանակավորող բառերից են օօի, թերիս, գուցե, ալօի արդյոք,
թերիս, հաշտաղանկ, հենց այդպես, և այլն:

Բառագիտություն: ինչպես արդեն նշվել է, բարբառի ամենաարժեքավոր
ներդրումը հայերենագիտության մեջ իր բառապաշարում եղած նոր բառերն
են, որոնք այլ բարբառներ և մատենագրությունը չի ավանդել: Նշենք
դրանցից մի քանիսը՝

համըրտէլ հարձակվել, Խօթու շրնվին վրոսա համըրտէցան /
ահանգ, այսպես, կազմված է այս-հանգի ձևի, բառերից Ահանգ բան կրլ
մէղաղղվէլ, հավաքվել, խմբվել, կուտակվել, բուրդվել, մեկ-տեղ-ուկիլ
բառերից լավանդված է միայն Չարսանջաղի երբեմնի հարևան բարբառ
օօի, թերիս, համարներն, ալօի, գուցե, արդյոք, թերիս, և այլն:

Ամենախոսուության վերջում տրվում է նյութի ամփոփումը, նմուշներ յու
րաբանչուր բարբառով և Բառարաններ՝ Գրաբարից բարբառ, Բառարանից աշխարհ-
հարաբ:

НОВОВЫЯВЛЕННЫЕ АРМЯНСКИЕ ДИАЛЕКТЫ АНАТОЛИИ

НЕРСЕС АРИС/ЦИРСВИЧ МИРТЧЯН

РЕЗЮМЕ

Изучение армянских диалектов в Турции прервалось в 1915 г. из-за истребления турками армянского населения в Турции. В диссертационной работе /из шести глав/ предпринята попытка устранить этот пробел. В исследовании описываются четыре армянских диалекта, носители которых до 1915 г. находились в Анатолии. Эти диалекты названы: Богазлянский /Каппадокия, Гамирк/, Сиври-Хисирским /между Анкары и Истамбулом/, Станозским /около Анакары/ и Муралчай-Дайла-Чалгарайским /на востоке Мраморного моря/. Первые два диалекта исследованы в обширной традиционной манере со словарями /древнеармянский-диалект, диалект-ашхарабар/, а последние-вкратце. Применяются диахронические и синхронные методы. Исследование проведено в 60-х годах в среде носителей этих диалектов. Сделаны также звукозаписи фольклорных, этнографических материалов. Эти диалекты для арменистики и диалектологического атласа открывают значительные новые материалы, помогая этим ответить на некоторые вопросы фонетики и морфологии армянского языка, пополняя наши знания о процессе происхождения новых диалектов и скрещивания диалектов в новой среде. Новизна этих диалектов **высока**: отметим некоторые из них:
- **Свыше ста слов**, не засвидетельствованных в других диалектах и в древнеармянском /грабаре/.

Некоторые звуковые переходы дают ключ к фонетическим явлениям, которые считаются спорными: например, по "Закону Ачаряна", если звонкие в начале слов оглушаются /б-п, г-к, д-т /, то следующие за ними гласные палатализируются /а-я, о-ё, у-ю, е-ё, и-й/. Но в некоторых диалектах после оглушения звонких палатализация гласных не происходит. Автор выявил причины помех палатализации гласных, оформляет "Закон Миртчяна", как дополнение к "Закону Ачаряна".

В морфологии этих диалектов также выявлено нечто новое: в Диалекте Сиври-Хисара продолжительное время настоящего времени выражается с помощью трех слов /глаголов/- *Կըր, Կըսիմ, էրըր*: Эволюция этих глаголов дает возможность наблюдения: становления аналитического глагола-вспомогательного слова, выражающее продолжительность действия. По мнению А. Айтуняна *Կըր* и *Կըր* восходит к глаголам грабара наст. вр. *Կըր* и пр. вр. *Կըրըր* третьего лица, един. числа.

Уникальна также в арменистике применение одной единственной морфемы для образования мн. числа. В грабаре их было много: совр. лит. яз. сократил число таких морфем до двух; *-եր* для односложных слов, а *սեր* для многосложных слов. Диалект Сиври-Хисара завершает эту тенденцию унификации до предела-оставляя единственной морфемой *-եր* для всех слов.